

անհատներու շահերուն կամ օգուտներուն:

Հետագային, Բենթամ նկատելով որ կարելի չէ «*առաւելագոյն*»ի հանգամանքը կիրարկել՝ թէ՛ մարդոց եւ թէ երջանկութեան պարագաներուն, կը նախընտրէ՝ «*առաւելագոյն երջանկութեան սկզբունք*»ը („Maximum-Happiness-Principle“), որու պատճառով, ան յստակօրէն կը թեքուէր՝ դէպի հոգեբանական հաճոյապաշտութիւն (Hedonism):

18-րդ դարու վերջաւորութեան, Ե. Բենթամ, իր «*առաւելագոյն երջանկութեան սկզբունք*»ով նկատի ունէր «օգուտ»ի (երջանկութիւն, հաճոյք, շահ, եւայլն...) առաւելագոյն քանակը միայն, այսինքն՝ «որքան աւելի՛ այնքան լաւ», ինչ որ կրնար բացասական կամ ժխտական իմաստ ալ ունենալ եւ յանգեր՝ եսասիրութեան (Egoism) ու հաճոյապաշտութեան (Hedonism):

19-րդ դարուն, Բենթամի աշակերտը, **Ջ. Ս. Միլ**, Բենթամի «*քանակական օգտապաշտութեան*» կողքին, նկատի ունեցաւ նաեւ *օգուտի* որակական ազդակները, ինչպէս՝ մշակութային, իմացական եւ հոգեկան բաւարարութիւնն ու գոհացումը: Շատերու կողմէ այս տարբերակը կոչուեցաւ նաեւ՝ Միլի «*որակական օգտապաշտութիւն*»: Հետագային Ջ. Ս. Միլ ասոնց վրայ աւելցուց նաեւ *ազատութեան* յոյժ կարեւոր ազդակը: Ջ. Ս. Միլ, բարոյագիտական իր տեսութիւնը նախ (1861-ին) շարունակական երեք յօդուածներով հրատարակած Է ամսագրի մը մէջ. ապա, 1863-ին, լոյս ընծայած Է ամբողջութեամբ, գրքի ձեւով՝ «*Օգտապաշտութիւն*» („Utilitarianism“) անուան տակ:

Աւելի ուշ, **Հ. Սիճվիք** կը շեշտէ բարոյական ներհայեցողութեան մը (Moral Intuition) առկայութիւնը օգտապաշտութեան սկզբունքին մէջ:

Դասական օգտապաշտութեան հիմնական սկզբունքները կարելի է ամփոփել հետեւեալ գլխաւոր չորս կէտերուն մէջ.-

1. Հետեւանքի սկզբունքը

Օգտապաշտութիւնը, որպէս նպատակաբանական բարոյագիտութիւն, հիմնական սկզբունք կը նկատէ (ամէն բանէ առաջ) վարմունքի *հետեւանքը* կամ *հետեւանքները*: Հետեւանք, որ մարդոց կողմէ անպայման դիտաւորեալ Է: Սակայն այս ուղղութեան մէջ ընդգրկուած պէտք Է ըլլան նաեւ՝ առանց դիտաւորութեան յառաջացած դրական ու բացասական, առաւել անմիջական ու հետագայ բոլոր հետեւանքները:

2. Օգուտի սկզբունքը

Վարմունքի հետեւանքի բարոյական տեսակէտէն ամենակարեւոր ու միակ չափանիշը *օգուտն* Է, որմէ տեսութիւնը ստացած Է նաեւ իր անուանումը: Բարոյագետներ, օգուտի մասին տարբեր կարծիքներ ունեցած են: Օգուտը կրնայ բարիք, բարօրութիւն, երջանկութիւն, շահ կամ առաւելութիւն նշանակել: Այս պատճառով ալ գոյութիւն ունին բազմատեսակ օգտապաշտական տեսութիւններ, ուր նախընտրութիւն կամ նախապատուութիւն կը տրուի որոշ օգուտի մը: